



«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24-Լ

30 դեկտեմբերի 2019 թվականի

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով և ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետով, ՎՊՀ «Ռեկտորի ընտրության կարգի» 13-րդ կետով ՎՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

- 1) ՎՊՀ ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:
- 2) ՎՊՀ ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:
- 3) ՎՊՀ ռեկտորի ընտրությունն անցկացնել 2020թ. մարտի 1-ին, ժամը 11⁰⁰-ին, ՎՊՀ վարչական շենքի դահլիճում:
- 4) ՎՊՀ ռեկտորի թափուր տեղի համար մրցույթի մասնակիցների հայտերն ընդունող հանձնախմբում ընդգրկել Սամվել Աղաջանյանին, Էդգար Խաչատրյանին, Սոնա Սարգսյանին:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Դ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

